

ՀԵՄՈՂԻԱԼԻԶԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԲՈՒԺՔՈՒՅՐԱԿԱՆ
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 19.3 հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝

- 1) «Հեմոդիալիզի սեանսի իրականացման համար հեմոդիալիզի սարքի նախապատրաստման բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 1-ի,
- 2) «Հեմոդիալիզի սարքի արտաքին ախտահանման բուժքույրական կլինիկական ուղեցույց/Fresenius 4008 H, 4008 E/»-ը՝ համաձայն Հավելված 2-ի,
- 3) «Հեմոդիալիզի սարքի ներքին ախտահանման բուժքույրական կլինիկական ուղեցույց/Fresenius 4008 H, 4008 E/»-ը՝ համաձայն Հավելված 3-ի,
- 4) «Հեմոդիալիզի սեանսի իրականացման բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 4-ի,
- 5) «Հեմոդիալիզի առաջին սեանսի վարման բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 5-ի,
- 6) «Հեմոդիալիզի սեանսի սկիզբը կենտրոնական կաթետրով բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 6-ի,
- 7) «Հեմոդիալիզի սեանսի ավարտը կենտրոնական կաթետրով բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 7-ի,
- 8) «Հեմոդիալիզի սեանսի սկիզբը արտերիո-վենոզ ֆիստուլայով վարման բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 8-ի,
- 9) «Հեմոդիալիզի սեանսի ավարտը արտերիո-վենոզ ֆիստուլայով վարման բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 9-ի,
- 10) «Հիպերկալեմիայի դեպքում առաջին օգնությունը՝ մինչև հեմոդիալիզի սկիզբը բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 10-ի,

- 11) «Երկաթ պարունակող պրեպարատի ն/ե ներարկում հեմոդիալիզի վերջում բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 11-ի,
 - 12) «Կենտրոնական կաթետրի լվացում բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 12-ի,
 - 13) «Կենտրոնական կաթետրի մշակում բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 13-ի,
 - 14) «Էրիթրոպոետինի ենթամաշկային ներարկում բուժքույրական կլինիկական ուղեցույց»-ը՝ համաձայն Հավելված 14-ի
 - 15) «Հեմոդիալիզի սարքի արտաքին ախտահանման բուժքույրական կլինիկական ուղեցույց/NIPRO, B/BRAUN/»-ը՝ համաձայն Հավելված 15-ի,
 - 16) «Հեմոդիալիզի սարքի ներքին ախտահանման բուժքույրական կլինիկական ուղեցույց/NIPRO, B/BRAUN/»-ը՝ համաձայն Հավելված 16-ի:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ.Բաբախանյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:
 3. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների տնօրեններին առաջարկում եմ՝ սույն հրամանով հաստատված ուղեցույցները ընդունելի գիտություն:
 4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ